«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տեղական հարկի տեսակներն են՝ գույքահարկը, հողի հարկը, ...:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե հողի հարկով հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա հողի հարկի՝ սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով օրենսգրքի «անշարժ գույքի հարկը» բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն, բացառությամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող այն հողամասերի, որոնցում առկա են տարբեր հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորներ՝ շենքեր և (կամ) շինություններ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.4-րդ հոդվածը սահմանում է՝ տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններն են:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմնին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչին արարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և

ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ա«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-4-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13.4-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետերով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սոնա Ռոբերտի Ավետիսյանից, Սուսաննա Հարությունի Ավետիսյանից, Ելենա Ռոբերտի Ավետիսյանից, Հասմիկ Ռոբերտի Ավետիսյանից, Ալինա Ռոբերտի Ավետիսյանից, Ռոբերտ Հրաչի Ավետիսյանից՝ հօգուտ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ **98241/ինսուսունութ հազար երկու հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 63215 վաթսուներեք հազար երկու հարյուր տասնհինգ / ՀՀ դրամ, տույժ՝ 35026 /երեսունհինգ հազար քսանվեց / ՀՀ դրամ:**

2. Մինչև 2020 թվականը ներառյալ հողի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 900325179043 հաշվեհամարին: Ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Խոյ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մայիսի 29

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hawugb khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2023 թվականի N 556-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 18/23 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Հովհաննես Հենրիկի Մկրտչյանը, Հենրիկ Հովհաննեսի Մկրտչյանը և Վարսենիկ Սերգոյի Մկրտչյանը /հասցե Խոյ համայնք գ. Ծաղկալանջ 1-ին փող., 1-ին նրբ. 1 տուն, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքների և ծանուցման հիման վրա, 2023 թվականի մարտի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Հովհաննես Հենրիկի Մկրտչյանին, Հենրիկ Հովհաննեսի Մկրտչյանին և Վարսենիկ Սերգոյի Մկրտչյանին ուղարկվել է ծանուցում /հիմք 13.04.2023թ. թիվ 18/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հովհաննես Հենրիկի Մկրտչյանը, Հենրիկ Հովհաննեսի Մկրտչյանը և Վարսենիկ Սերգոյի Մկրտչյանը ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, պնդում չեն ներկայացվել լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համակարգ հանդիսացող «Վեկտոր պլյուս» ծրագրից ձեռք բերված տվյալները՝ Խոյ համայնքում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում

են Հովհաննես Հենրիկի Մկրտչյանի, Հենրիկ Հովհաննեսի Մկրտչյանի և Վարսենիկ Սերգոյի Մկրտչյանի համատեղ սեփականությունը և «Գույքահարկի մասին» ու «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով վերջիններիս կողմից չի կատարվել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղում գտնվող 1-ին փող., 1-ին նրբ. 1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակելի շենք շինություն, /կադաստրային ծածկագիր՝ 04-051-0002-0002/ գույքահարկի գծով 17746 /տասնյոթ հազար յոթ հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 11934 /տասնմեկ հազար ինը հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 5812 /հինգ հազար ութ հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղում գտնվող 1-ին փող., 1-ին նրբ. 1 տուն հասցեում գտնվող 0,236 հա մակերեսով հողատարածքի համար /կադաստրային ծածկագիր՝ 04-051-0002-0002/ հողի հարկի գծով 62777 /վաթսուներկու հազար յոթ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 39156/երեսունինը հազար հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 23621 /քսաներեք հազար վեց հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Վաղարշապատ համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի

գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ, 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածներով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հովհաննես Հենրիկի Մկրտչյանին, Հենրիկ Հովհաննեսի Մկրտչյանին և Վարսենիկ Սերգոյի Մկրտչյանին հոգուտ Խոյ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **80523 /ութսուն հազար ինը հինգ հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ**, Ծաղկալանջ գյուղում գտնվող 1-ին փող., 1-ին նրբ. 1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակելի շենք շինություն համար **17746 /տասնյոթ հազար յոթ հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ** հարկային պարտավորություն, որից 11934 /տասնմեկ հազար ինը հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 5812 /հինգ հազար ութ հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու

ընթացքում գոյացած տույժերի և նույն հասցեում գտնվող 0,236 հա մակերեսով հողատարածքի համար հողի հարկի գծով /կադաստրային ծածկագիր՝ 04-051-0002-0002/ 62777 /վաթսուներկու հազար յոթ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 39156/երեսունինը հազար հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 23621 /քսաներեք հազար վեց հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2. Մինչև 2020 թվականը ներառյալ հողի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 900325179043 հաշվեհամարին, իսկ գույքահարկի՝ շենք շինության մինչև 2020 թվականը ներառյալ հաշվարկված ապառքը և տույժերը վճարել խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 900325179027 հաշվեհամարին: Ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ն.Ա. Ջեզե



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մայիսի 29

խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hmayg khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2023 թվականի N 557-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 310 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման **2022DQHH4W** ծածկագիրը և հիմք ընդունելով **Հարություն Կիրակոսյանի** դիմումը՝ իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի **Արշալույս գյուղի 3-րդ փողոց 84 տնամերձ, 04-021-0025-0012** կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Հարություն Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող 3-րդ փողոցի թիվ 84 հասցեում /իրավունքի պետական գրանցման վկայականի N 0189976/ կադաստրային ծածկագրով 0,909 հա հողամասի վրա կառուցված ընդամենը 122,9 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ինքնակամ շինությունները /23,30 քմ կիսակառույց շին. նկուղ, կառուցված՝ 2001թ., 1,20 քմ աստիճան, կառուցված՝ 2001 թ., 52,80 քմ կիսակառույց շինություն, կառուցված՝ 2001 թ., 19,70 քմ անասնաշենք, կառուցված՝ 2001 թ./:

2. Ինքնակամ կառույցների մեկ քառակուսի մետրը բնակելի նշանակության շինությունների համար՝ 1209 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Հարություն Կիրակոսյանը /անձնագիր AS 0353492, տրված 29.08.2018թ. 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին՝ **148537**/հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր ութսունյոթ ՀՀ դրամ/, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:


4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0025-0012 կադաստրային ծածկագրով հողամասին տալ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ, Արշալույս, 3-րդ փողոց թիվ 84 հասցեն:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

6. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 22-ի N 310 որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մայիսի 31
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ. Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2023 թվականի N 558-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող «ԲԵՍԹ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Դավիթ Հովհաննիսյանի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացրած հայտը.

որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող «ԲԵՍԹ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի / 01.05-30.12 / համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԴԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մայիսի 31
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2023 թվականի N 559-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-055-0044- կադաստրային ծածկագրով 0,15 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հայթաղ գյուղ, Բագրատունիների փողոց թիվ 1 տարածք հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 01
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2023 թվականի N 560-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-055-0025- կադաստրային ծածկագրով 0,07409 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հայթաղ գյուղ, Մ.Մաշտոցի փողոց թիվ 5/3 տարածք հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 01
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2023 թվականի N 561-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-037-0010- կադաստրային ծածկագրով 0,03 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Դաշտ գյուղ, Բարեկամության փողոց թիվ 17/1 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 02
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2023 թվականի N 562-Ա

ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-006-0085- կադաստրային ծածկագրով 0,09575 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Աղավնատուն գյուղ, Հարավային 3-րդ փողոց թիվ 15 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 02
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2023 թվականի N 563-Ա

ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Հովհաննես Իշխանի Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-087-0002-0007 կադաստրային ծածկագրով 0,147 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Գեղակերտ գյուղ, Դ.Կանայան փողոց թիվ 14 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 02
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2023 թվականի N 564-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Գոռ Փափակի Սողոմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-087-0054-0021 կադաստրային ծածկագրով 0,1100 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Գեղակերտ գյուղ, Ե. Խաչատրյան փողոց թիվ 5 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունիսի 05
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hawugb khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2023 թվականի N 565-Ա

ՎԻՐԱԲ ՆՈՐԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 48/23 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում Վիրաբ Նորիկի Մխիթարյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ Վիրաբ Նորիկի Մխիթարյանը (հասցե՝ Խոյ համայնք, գյուղ Գեղակերտ, Ե. Խաչատրյան փող., թիվ 4 տուն, անձնագիր՝ AS0359474, տրված 04.09.2018-ին, 057-ի) կողմից Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 27.04.2023 թվականի թիվ 46-4/19-2895 գրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 05.05.2023թ./ հիման վրա 2023 թվականի մայիսի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Խոյի համայնքապետարանը, հրավիրել և անցկացրել է լսում որին Վիրաբ Նորիկի Մխիթարյանը պատշաճ ծանուցվել է և ներկայացել է վարչական վարույթի լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա.Ոսկանյանի 27.04.2023թ-ի թիվ 46-4/19-2895 գրությունը և կից նյութերը:
- Հանձնաժողովի 24.05.2023թ. թիվ 48/23 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանարդյունքում, բացահայտելով

գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վիրաբ Նորիկի Մխիթարյանը հույ համայնքի Գեղակերտ գյուղի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի մայիսի 24-ին հույի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որին Վիրաբ Նորիկի Մխիթարյանը պատշաճ ներկայացել է:

Հրավիրված վարչական լսումների վերաբերյալ ծանուցումն առձեռն հանձնվել է Վիրաբ Նորիկի Մխիթարյանին:

Վիրաբ Նորիկի Մխիթարյանը պատշաճ կարգով ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, ներկայացել է վարչական վարույթի լսմանը:

ՀՀ ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Ա.Ոսկանյանի գրությունը ստանալուց հետո հույ համայնքի՝ Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու, գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու համար նյութեր նախապատրաստող հանձնաժողովի կողմից այց է կատարել իրավախախտման վայր: Այցի ընթացքում պարզվել է, որ Վիրաբ Նորիկի Մխիթարյանը ոստիկանության աշխատակցի բանավոր նախազգուշացումից հետո /արձանագրություն կազմելու ժամանակ/, վերացրել է իրավախախտման հետևանքները և չի իրականացնում առևտուր ոչ սահմանված վայրում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի կողմից իրավախախտման հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի համաձայն ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, ավտոտրանսպորտային միջոցների շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում): Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ, 25-րդ, 32-րդ հոդվածներով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերաբ Նորիկի Մխիթարյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:


2. Նախազգուշացնել, Վերաբ Նորիկի Մխիթարյանին՝ որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝

մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. հունիսի 05

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hawugte khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2023 թվականի N 566-Ա

ԱՐՏԱՇԵՍ ՔԵՐՈՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 49/23 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում Արտաշես Քերոբի Մանուկյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

Արտաշես Քերոբի Մանուկյանի (հասցե՝ Խոյ համայնք, գյուղ Գեղակերտ, Կոմիտասի փող., 1-ին նբանցք 2 տուն, անձնագիր՝ AT0310916, տրված 21.11.2019-ին, 057-ի) կողմից, Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 27.04.2023 թվականի թիվ 46-4/19-2895 գրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 05.05.2023թ./ հիման վրա 2023 թվականի մայիսի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Խոյի համայնքապետարանը, իրավիճակը և անցկացրել է լսում որին Արտաշես Քերոբի Մանուկյանը պատշաճ ծանուցվել է և ներկայացել է վարչական վարույթի լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

• ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 27.04.2023թ-ի թիվ 46-4/19-2895 գրությունը և կից նյութերը:

Հանձնաժողովի 24.05.2023թ. թիվ 49/23 վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանարդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արտաշես Քերոբի Մանուկյանը խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Երևան-Արմավիր մայրուղու հատվածում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում:

